ԲԱՐԴ ԱՆՑՅԱԼԻ ԴՊՐՈՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

CULTURAL & SOCIAL NARRATIVES LABORATORY

NEW DEMOCRACY FUND

WOMEN'S FUND ARMENIA

Marion Dönhoff-Stiftung

ԲԱՐԴ ԱՆՑՅԱԼԻ ԴՊՐՈՑ

«Բարդ անցյալի դպրոցը» CSN Lab-ի ամենամյա այլընտրանքային կրթական ծրագիրն է: Այն նպատակ ունի խթանել քննադատական մտածողությունն ու հանրային երկխոսությունը անցյալի մշակութային և քաղաքական բարդ խնդիրների, ինչպես նաև արդի իրականության վրա դրանց ազդեցության շուրջ: Քննարկումների, դասախոսությունների, աշխատարանների ու երկխոսության վրա հիմնված ծրագրերի համադրությամբ դպրոցը ստեղծում է հարթակ՝ Հայաստանի և տարածաշրջանի բարդ անցյալի շուրջ խորհելու և այն վերաիմաստավորելու համար:

Վերջին տասնամյակներում հումանիտար և հասարակական գիտություններում ձևավորվել են նոր մոտեցումներ և գիտելիքներ, որոնք էական ազդեցություն ունեն քաղհասարակության և լայն հանրության ընկալումների ձևավորման վրա: Ներկայիս քաղաքական և մշակութային իրադրության շուրջ քննարկումներում ի հայտ են գալիս բազմաթիվ տեսություններ, որոնք անցյալը դիտարկում և հետազոտում են տարբեր դիտանկյուններից՝ անհարմար անցյալ, գաղութային անցյալ, չլուծված անցյալ, տրավմատիկ անցյալ և այլն: Հայաստանի և տարածաշրջանի փորձառությունը, սակայն, բացահայտում է բարդությունների ինքնատիպ և բազմաշերտ համակարգ, որը հաճախ դուրս է մնում առկա հայեցակարգերի սահմաններից: Այդ պատճառով, նաև հաշվի առնելով հիշողության ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը, քաղաքական և մշակութային խաչմերուկում ձևավորված այս անցյալը մենք բնորոշում ենք առավել ընդգրկուն՝ «բարդ անցյալ» հասկացությամբ:

«Բարդ անցյալի դպրոցը» յուրաքանչյուր տարի ձևավորվում է՝ արձագանքելով արդի իրողություններին ու մարտահրավերներին: Նախորդ տարիներին դպրոցն անդրադարձել է առանցքային փոխհատվող թեմաների, ինչպիսիք են գաղութային անցյալն ու նեոգաղութացումը, փախստականությունն ու միգրացիան, շրջակա միջավայրն ու էկոլոգիական ճգնաժամը, հիշողության քաղաքականությունն ու ինքնության տարբեր հիմնահարցերը: Անցյալի քննության միջոցով մենք ձգտում ենք ձևավորել հիշողության նկատմամբ թափանցիկ և ժողովրդավար մոտեցում, ինչպես նաև ստեղծել ընդգրկուն, հորիզոնական և քննադատական միջավայր՝ հասկանալու այն նարատիվները, որոնք ձևավորում են մեր ներկան:

ԲԱԴ 2026: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Արձագանքելով վերջին տարիներին Հայաստանի շուրջ ծավալվող աշխարհաքաղաքական գործընթացներին, դրանց արդյունքում հանրային մակարդակում ձևավորվող բևեռացված մթնոլորտին և այդ համատեքստում սպասվող ընտրական գործընթացներին՝ ԲԱԴ 2026-ը միտված է հարցադրելու, քննելու և ապակառուցելու հայաստանյան քաղաքական գործընթացները՝ վեր հանելով դրանց մշակութային, լեզվական, սոցիալական և գենդերային շերտերը, որոնք հաճախ դուրս են մնում հանրային, իսկ երբեմն նաև մասնագիտական խոսույթից: «Ընտրություն» խորագրով ծրագիրը արդի քաղաքական իրադրությունն ու սպասվող ընտրական գործընթացները դիտարկում է ոչ թե որպես կարճատև դիպված, այլ որպես սոցիալական և մշակութային տարածություն, որտեղ իշխանությունը, նարատիվներն ու իմաստները մշտապես կառուցվում, վիճարկվում և բանակցվում են:

ԲԱԴ 2026 ծրագիրը միջգիտակարգային դիտանկյուններից անդրադառնում է ընտրական գործընթացներին՝ ուսումնասիրելով ներկայացվածության, մասնակցության, ինչպես նաև լեզվի, մեդիայի և ինքնության դերը քաղաքական իրականությունների ձևավորման գործում: Այս տարվա միջգիտակարգային ծրագիրը հնարավորություն է տալիս մասնակիցներին խորությամբ անդրադառնալ ընտրական գործընթացների բազմաշերտությանը:

ԾՐԱԳԻՐԸ ԿԱՌՈՒՑՎԱԾ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ՝

- **Ընտրության գաղափարի փիլիսոփայական և մշակութային շերտերը** — ընտրական մշակույթի և ընտրության գաղափարի վերաիմաստավորում պատմական և մշակութային դիտանկյուններից:

- **Ընտրական գործընթացների պատմությունը** — ընտրությունների զարգացման, ընտրախախտումների, մասնակցության և քաղաքական նարատիվների վերլուծություն տարբեր ժամանակաշրջաններում:

- **Հակաժողովրդավարական նարատիվները** — նախընտրական հռետորաբանության, ապատեղեկատվության և քաղաքացիական հասարակությունը թիրախավորող նարատիվների վերլուծություն:

- **Դավադրության տեսությունները և վստահության ճգնաժամը** — դավադրապաշտական պատումների և խոսույթների ուսումնասիրություն քաղաքական և ընտրական գլոբալ ու լոկալ համատեքստերում:

- **Ընտրությունները և գենդերային հիմնահարցերը** — սեռահեն կարծրատիպերի, մանիպուլյացիաների և դրանց ազդեցության ուսումնասիրություն ընտրողների վարքի և քաղաքական մասնակցության վրա:

- **Մեդիա գործիքները և քարոզչությունը** — ապատեղեկատվության և քարոզչական մեխանիզմների ազդեցությունը քաղաքական իրողությունների վերաբերյալ հանրային ընկալումների ձևավորման և հասարակության բևեռացման վրա։

- **Ընտրության լեզուն** — ընտրությունների ուսումնասիրություն՝ որպես լեզվական, տեսողական և մշակութային խոսույթ, կանխադրույթների, ներկայացվածության և իմաստների կառուցման դիտանկյունից։

ՈՒՍՈՒՑՉԱՆՈՑ

ԷԴԳԱՐ ՋԱՏԻԿՅԱՆ

Էդգար Ջատիկյանը քաղաքագետ է: 2024 թվականից աշխատում է «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ում՝ որպես ծրագրերի օգնական: Այժմ սովորում է Հայաստանի ամերիկյան համալսարանի «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» մագիստրոսական ծրագրում: 2018 թվականից զբաղվում է ակտիվիզմով՝ բարձրաձայնելով մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև ընտրությունների ազատ և թափանցիկ անցկացման կարևորությունը: Նա անդրադառնում է նաև քաղաքային խնդիրներին և հանրային տարածքների հետ կապված հարցերին:

ՄԱՐԻԱՄ ԽԱԼԱԹՅԱՆ

Մարիամ Խալաթյանը սոցիոլոգ է, «Սոցիոսկոպ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող: Նրա մասնագիտական հետաքրքրությունները ներառում են հայաստանյան քաղաքացիական հասարակության փոխակերպումներն ու զարգացումները, ժողովրդավարական գործընթացները, խաղաղության և պատերազմի խոսույթները, ինչպես նաև սեռի և սեռականության հարցերը: Նրա հետազոտությունների կենտրոնում անհատի և ինստիտուտների փոխազդեցություններն են, սոցիալական փոփոխությունները և սոցիալական անարդարության հիմնահարցերը:

ՌԱՖԻԿ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
Ռաֆիկ Սանթրոսյանը լեզվաբան է, բանասիրական գիտությունների թեկնածու և Հայաստանի ամերիկյան համալսարանի դասախոս: Նրա հետազոտական և դասավանդման հետաքրքրությունները ներառում են գենդերային լեզվաբանությունը, իմաստաբանությունը, բազմեղանակ նշանագիտությունը և լեզվի միջոցով արտահայտվող մշակութային պրակտիկաները:

ՍԱՄՎԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Սամվել Մարտիրոսյանը մեդիա փորձագետ է, մասնագիտացած է տեղեկատվական անվտանգության և նոր մեդիայի ոլորտներում: Նա դասավանդում և վերապատրաստումներ է անցկացնում Հայաստանի մի շարք համալսարաններում, ինչպես նաև դասավանդում է «Արեգնազան» դպրոցում: Սամվել Մարտիրոսյանը Հայաստանի Ինտերնետ կառավարման խորհրդի անդամ է, «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի վարչության անդամ և TEDxYerevan-ի խորհրդատվական խորհրդի անդամ:

ՏԱԹԵՎԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ
Տաթևիկ Ղազարյանը քաղաքագետ է, ընտրությունների և տեղական ինքնակառավարման հարցերով փորձագետ: Նա «Ականատես» դիտորդական առաքելության համակարգողն է և «Ժողովրդավարության և անվտանգության տարածաշրջանային կենտրոնի» (RCDS) փորձագետը: Համագործակցում է ընտրական ոլորտում գործունեություն իրականացնող միջազգային կառույցների հետ (ENEMO, EPDE, IRI, IFES) և իրականացնում հետազոտություններ ընտրական և տեղական ինքնակառավարման համակարգերի հիմնախնդիրների շուրջ:

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐՅԱՆ
Տիգրան Ամիրյանը «Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիայի» հիմնադիրն է: Նա բանասիրական գիտությունների թեկնածու է, մշակութային հետազոտող, սեմիոլոգ և համադրող: Հեղինակել է բազմաթիվ միջգիտակարգային հետազոտական նախագծեր և գիտական հոդվածներ, որոնք անդրադառնում են քաղաքային տարածության փոխակերպումներին, բնական միջավայրի գաղութացմանը, ինչպես նաև մշակութային և սոցիալական հիշողությանը:

ՎԱՐԴԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վարդինե Գրիգորյանը հանրային կառավարման մասնագետ է և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ծրագրերի ղեկավար: Նա համակարգում է «Անկախ դիտորդ» դաշինքը, որը 2017 թվականից միավորում է դիտորդական առաքելություններ իրականացնող, ինչպես նաև ընտրական բարեփոխումների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնող մի շարք կազմակերպություններ:

ՄԱՅԻՍԻ 29 | ՈՒՐԲԱԹ

8:30 - 10:00 | Մեկնում Երևանից դեպի Աղվերան

10:00 - 10:30 | Ժամանում և մասնակիցների գրանցում

10:30 - 11:00 | Ողջույնի խոսք և ծանոթացում

11:00 - 11:30 | Սուրճի ընդմիջում

11:30 - 13:00 | Տաթևիկ Ղազարյան — Ընտրության գաղափարի փիլիսոփայական և մշակութային շերտերը

13:00 - 14:30 | Վարդինե Գրիգորյան — Ընտրական գործընթացների պատմությունը Հայաստանում

14:30 - 15:30 | Ճաշի ընդմիջում

15:30 - 17:00 | Սամվել Մարտիրոսյան — Հանրային ընկալումների ձևավորումը մեդիա միջավայրում

17:00 - 18:30 | Մարիամ Խալաթյան — Հակաժողովրդավարական նարատիվները Հայաստանում

18:30 - 19:00 | Աշխատարանի ներկայացում

19:00 - 20:00 | Ընթրիք

ՄԱՅԻՍԻ 30 | ՇԱԲԱԹ

9:00 - 10:00 | Նախաճաշ
10:00 - 11:00 | Տիգրան Ամիրյան — Դավադրության տեսություններ և վստահության ճգնաժամ
11:00 - 12:00 | Աշխատարան
12:00 - 12:30 | Սուրճի ընդմիջում
12:30 - 14:00 | Էդգար Ջատիկյան — Ընտրություններ և գենդերային դինամիկաներ
14:00 - 15:00 | Ճաշի ընդմիջում
15:00 - 16:30 | Ռաֆիկ Սանթրոսյան — Ընտրության լեզուն
16:30 - 18:00 | Աշխատարանի ամփոփում
18:00 - 19:00 | Ընթրիք

ՄԱՅԻՍԻ 31 | ԿԻՐԱԿԻ

9:00 - 10:00 | Նախաճաշ
10:00 - 10:30 | ԲԱԴ ընտրություններ
10:30 - 11:30 | Դպրոցի ամփոփում
11:30 - 12:00 | Մեկնում

«Բարդ անցյալի դպրոց. ընտրություն» ծրագրի շրջանակում հարցերի և/կամ աջակցության անհրաժեշտության դեպքում խնդրում ենք կապ հաստատել ծրագրի համակարգողների հետ:

Ագնեսա Թարիվերդյան
Հեռ.՝ +374 96 960377
agnesa@csnlab.net

Դիանա Սիսակյան
Հեռ.՝ +374 94 934554
diana@csnlab.net

Արսեն Աբրահամյան
Հեռ.՝ +374 98 424757
arsen@csnlab.net

CSN Lab-ի գործունեությունն ուղղված է Հայաստանում մշակութային երկխոսության, ժողովրդավարության և խաղաղության խթանմանը: Մեզ համար անընդունելի են սեքսիզմը, ռասիզմը, հոմոֆոբիան, ատելության խոսքը և անհանդուրժողականության այլ դրսևորումները:

«Բարդ անցյալի դպրոցը» CSN Lab-ի ամենամյա նախագիծն է, որը այլընտրանքային կրթության միջոցով նպաստում է բարդ անցյալի շուրջ հանրային խոսույթի ձևավորմանը:
«ԲԱԴ 2026»-ն իրականացվում է «Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա» (CSN Lab) հասարակական կազմակերպության կողմից՝ «Նոր ժողովրդավարության հիմնադրամի» (NDF), «Հայաստանում կանանց հիմնադրամի» (WFA) և Marion Dönhoff հիմնադրամի աջակցությամբ: